

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

խմբագրատանը գրվում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւնը ընկողնում է ամեն լիցուով:

Ցայտարարութիւնները համար գծաւորում են
խորանայի թաւին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միացեալ ընկերութիւնը հայոց:
Նամակ խմբագրին:—ԶԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վեհե-
ցիայի աշխարհադրական ժողովը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 7

Որոնց ատամները ցուել են, նրանք անշուշտ
գիտեն թէ՛ որքան անտանելի է այդ հիւանդու-
թիւնը, մանաւանդ, երբ ատամնաբույժները չը կարո-
ղանալով դեղերով այդ հիւանդութեան առաջն-
առնել, խորհուրդ են տալիս բուրդովին արմատա-
խիլ անել ատամը: Ահա սրանից մի շարքի ա-
ռաջ, ատամները մէկը սատակի ցաւում էր,
տեղական ատամնաբույժներն դիմեցին, բայց ո-
չինչ օգնութիւն չը գտաւ: Վերջապէս, հաստատ
վճռեցին բուրդովին հանել տալ, բայց բարեկամ-
ներինս մէկը, խորհուրդ տուց ինձ դիմել Հաւ-
լարացի պ. Գրիգոր Գալուսեանին, որին և դի-
մեցի: Եւ ինչ, այդ ինքնուս պարտնք, որ Ներ-
սիսեան զարդի չորրորդ դասատանից է դուրս
եկել, իր հնարած դեղի զօրութեամբ ամենակարճ
միջոցում ոչնչացրեց ատամի ցաւը: Պարտնք,
բացի ինձանից, նոյնպէս բժշկել է Թիֆլիսի նը-
շանաւոր բնտանիքներից շատերին, որոնցից վը-
կայաթղթեր ունի: Կատարեալ յաջողութիւն կը
ցանկանամ մեր երիտասարդ ատամնաբույժին,
իր նորագիտ արհեստի մէջ:

Ղազարոս քահանայ Գովսէփեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 սեպտեմբերի

Սուրբ Գայիանեան օրիորդաց Միջնակարգ ու-
սումնարանի վարչութիւնը ստացաւ մեծապատիւ
պարոն Եագոր Եղիազարեանից հուկեր յիշա-
տակ իր հանգուցեալ դուստր Հռիփսիմէի մէկ
վիզրիշի տոմսակ 50% տոկոսաբեր առաջին
փոխաւնութեան, № 39, սէրի 16083:

Տեսուչ՝ Ն. Խորոզեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք «Journal d'Orient» քաղցրի համար
Հուլիսի, պ. Աւետիս Զօհրաբեանից 10 րուբլ:
Անցեալ փողերի հետ կանի 962 րուբլ: Հարկա-
ւոր ենք համարում ասել որ այդ գումարի մէջ
մենք հաշուում ենք և այն 400 րուբլ, որ պէտք
ստանանք Ղարսից:

Հնագիտական ժողովի նիստերը փոխարքայի
պալատի մէջ շարունակուում են: Ամեն օր առա-
ւօտ և երեկոցեան նիստեր են լինում: Ժողովուր-
դը մեծ բազմութեամբ է յաճախում նիստերին:
Հնագիտական ժողովի անդամները ասում են
որ ոչ կիեկում, ոչ էլ կազանում հասարակու-
թիւնը այն համակութիւնը չէր ցոյց տալիս
դէպի Հնագիտական ժողովի նիստերը, ինչ հա-
մակութիւն է ցոյց տալիս Թիֆլիսի հասարա-
կութիւնը: Թիֆլիսցիները փոքր առ փոքր սկը-
սում են զգալ պահանջ դէպի գիտութիւն: Դա
ամենալաւ ապացոյցներից մէկն է, որ մեր քա-
ղաքը ճշմարիտ կարօտ է մի բարձրագոյն դպրո-
ցի, մի համալսարանի:

Ներսիսեան զարդի ուսուցիչ, Աւետիք Տէր-

Յակոբեանց հրատարակել է «Ֆիզիկական, ժո-
ղովրդագրական և քաղաքական աշխարհագրու-
թիւն Հայաստանի» վերնագրով մի ձեռնարկ:
Տպւած է 304. Մարտիրոսեանի տպարանում,
ներկայ 1881 թ.ին: Գրքի գինն է 60 կոպէկ:
Այս գրքի վրա, որ մենք շնորհակալութեամբ
ստացանք նրա հեղինակից, կաշխատենք մի այլ
անգամ խօսել աւելի մանրամասնաբար:

Ստացանք վիեննայի «Journal d'Orient» քա-
ղցրի 37 համարը, որի մէջ դարձեալ յօդուածներ
կան հայոց խնդրի մասին: Ֆրանսիական քաղցրի
խմբագիրը շարունակում է քաջութեամբ պաշտ-
պան հանդիսանալ Թիֆլիսից Հայաստանի շահե-
րի: Լրագիրը խոստանում է իր հետեւել համար-
ներից մինի մէջ հրատարակել Նուբար-փաշայի
կենսագրութիւնը:

Թիֆլիսի Հնագիտական ժողովի պատրաստա-
կան մասնաժողովի կարգադրութեամբ, ժողովի
բացումից առաջ հրատարակեցաւ «Հնագիտա-
կան ուղեցոյց Թիֆլիսի մէջ» (Археологический
Путеводитель по Тифлису) գրքերի գրքերը:
Գրքը կազմել է պ. Պրոքշենկո: Այդ գրքերը
բաժանվել է ձրիաբար ժողովի անդամներին:

Հատերից լսել ենք հետեւեալ նկատողութիւնը
Հնագիտական ժողովի ղեկավարողների մեծ
մասի դասախոսելու մասին, այն է որ նրանք
գրեթէ ամենքը չափ ցած են խօսում, այնպէս
որ պալատի բնդարձակ դահլիճի մէջ չափ
գոտար է, իսկ շատ ասիւն, որ գրեթէ կրկնու-
թիւն է «Փորձի» մէջ նոյն նիւթի մասին տպւած

Սեպտեմբերի 10-ին պ. Երեցեան մի գեկու-
ցում է արել Հնագիտական ժողովի մէջ ասում
և մէկերորդ դարու «Թնդրակեցիք» անուան-
ված հայոց պաշտի մասին: Նրան պատասխա-
նեց ժողովի մէջ պ. Ամիրխանեանց: Պ. Երե-
ցեանի ղեկուցման մասին, որ գրեթէ կրկնու-
թիւն է «Փորձի» մէջ նոյն նիւթի մասին տպւած

հնագիտութեան նշանաւոր սիրողները, որոնք
այնքան շատ են Անգլիայում և ուրիշ երկրնե-
րում, սիրում են հեռու անցեալը յիշեցնել իրանց
հեղինակութիւնը ամբաստելու համար ներկա-
յում, այն ինչ հասարակ մահաւանդութիւնը խո-
րատուելու են անցեալի խորքերում ժամանա-
կակցներին մոռանալու համար:

Հատ պայմաններն են հարկաւոր հնագիտական
հետազոտութիւններով ամբողջ հետաքրքրելու
համար և այդ կողմից մանաւանդ բազմաւոր գը-
տնվեցաւ հոշակաւոր Հէնրիկ Շլիման, որը իր
անունը միացրեց Հոմերոսի երգած Տրոյի միա-
ցորդների գիւտի հետ: Նորերում հրատարակվե-
ցաւ մէկ ընդարձակ նկարագրութիւն բոլոր նրա
արած և գտած բաների այն տեղերում, որոնք
Եղիականի հերոսների կեանքի և քաջագործու-
թիւնների ասպարէզ էին: Շլիմանի աշխատու-
թեան մէջ կայ և հեղինակի կենսագրութիւնը
բուզօթի վիրիսով յառաջաբանով և բուզօթի,
Բիւրնուֆի, Մակա Միւլլէրի, վիրիսով և այլ
գիտնականների ծանօթութիւններով:

Շլիմանի անունը և գործունէութիւնը այնքան
յայտնի են բոլոր լուսաւորած աշխարհին, որ
խօսել նրա անդուլ աշխատութիւնների և նրանց
փառաւոր եղբայրացիութիւնների մասին բոլորո-
վիւն աւելորդ էլ լինէր. ամեն մէկը կարգացել է,
կամ կարող է կարող նրա հաշիւները, ամենքը
գոնէ լսել են նրա հաւաքած այն նշանաւոր գան-
ձերի մասին, որոնք այժմ գտնվում են Բիւրնուֆի,
Աթէնքի և Վ. Պօլսի թանգարաններում: Բայց,
երեւի, շատերին յայտնի չեն այդ եռանդոտ և
վերին աստիճանի բազմաւոր հետազոտողի կեան-
քի մանրամասնութիւնները: Այստեղ մենք կը
հաղորդենք Հէնրիկ Շլիմանի մասին հետաքրքրի
տեղեկութիւններ:

Մանկական տարիներից, Հէնրիկ Շլիման,
հայրենական մեկէնուրբեքեան գիւղում, լինելով
գիւղական խաղաղ հանգամանքների մէջ, գրաւ-

յօդուածի, մենք յոյս ունենք ժամանակով խօ-
սելու մեր քաղցրի էջերում:

Սեպտեմբերի 9-ին Թիֆլիսից դէպի Էջմիածին
ուղեորվեցաւ Մամրէի վարդապետը, Մանուկ-
նուն իր գործունէութեան հաշիւը տալու համար:
Լուում ենք, որ Մամրէն պէտք է եպիսկո-
պոս ձեռնադրվի և այնուհետեւ վերադառնայ
Թիֆլիս, որպէս վրաստանի և Իմէրէթի հայոց
թեմի լիազօր առաջնորդ: Չենք իմանում Աղա-
փիւրեան Գրիգոր եպիսկոպոսը Բնչ պէտք է
անի այն ժամանակ Թիֆլիսում:

Սեպտեմբերի 6-ին գիշերը, Թիֆլիսի Սիօնեան
փողոցի մի սեղանաւորի խանութը կորելով,
զողերը տարան, ինչպէս ասում են, մինչև 35,000
րուբլ փող: Գողերը անհետացել են: Կարծում
են որ նրանք մտել են խանութը արտաքնոցի
խողովակից:

Լուում ենք որ Ներսիսեան զարդի հոգաբար-
ձութիւնը կամենում է դպրոցի տեսուչ նշանա-
կել պ. Արիստով Գովհաննիսեանին:

Նուրսուց մեզ գրում են: «Այստեղ աւետարա-
նական եկեղեցին օրից օր աւելի և աւելի է
տարածվում: Աւետարանական հայերը ունեն
իրանց առանձին ժողովարան, ուր հաւաքվում
են և լուսաւորական հայերից և ուսուցիչներից
շատերը, ամեն կիրակի օր:

Ստացանք պ. Եագոր Եղիազարեանից յօդուած
պ. Պօլսի Միացեալ ընկերութեան և յիշատակ
իր հանգուցեալ դուստր Հռիփսիմէի մի 50% տո-
կոսաբեր երկրորդ փոխաւնութեան տոմսակ
№ 30, սէրի 03593, որ պարտնք խնդրեցով կը
հասցնենք Ներսիս պատրիարքին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԶԱՅՈՑ

Աւետիկ այն կարեւոր Հիմնագիր, զոր Մի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՎԵՆԵՑԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

«Порядокъ» քաղցրի մէջ կարդում են հետե-
ւեալը:

Պատում են, որ ժամանակակից յայտնի դիպ-
լոմաներից մէկը Բերլինի կոնգրէսի նախընթաց
օրը շտապով աշխարհագրութեան դասեր էր առ-
նում քաղաքա-աշխարհագրական վիճաբանու-
թիւնների ժամանակ չը խաչատուակվելու համար:
Մէկ ուրիշ քաղաքագէտ, եւրօպական մեծ անու-
նով, Բաթումի վերաբերութեամբ երկար և տաք
վիճաբանութիւնից յետոյ, դիմեց իր մասնաւոր
բարտաւորարկ հարցումներով, որոնց է գտնվում
Բաթումը և արդէն արդեօք վիճաբանել նրա հա-
մար: Այդ պետական մարդը, շատ կարելի է հա-
նաք էր անում միայն, բայց և շատ կարելի է,
որ այս անգամ նա ծանր կերպով էր հարցնում:

Ահա թէ ինչու համար վիենցիայում հաւաք-
ված աշխարհագրական կոնգրէսը քիչ հետաքր-
քութիւն չարժեց պետական մարդիկների և
պուրլիցիստների մէջ: Ղրաքիցիներն ևս բաւալա-
նացան կարճ տեղեկութիւններ տպելով կոնգրէ-
սի բացումից առաջ եղած հանդիսի մասին: Այն
ինչ հանդէսը և կոնգրէսը արժանի էին աւելի
մանրամասն նկարագրութիւնների:

Ընակութիւնը մեծ համակութեամբ մասնակցեց
պատրաստութիւններին, և հանդէսը, ինչպէս ա-
սում են, շատ հետաքրքրի էր: Ռուսաստանի,
Անգլիայի և Շվեյցարի բաժնիները տեղաւորված
են առանձին գեղեցիկ կերպով զարդարված շի-
նութեան մէջ: Հանդէսը բացված է սեպտեմբե-
րի 1-ից, իսկ կոնգրէսը բաց կանի իր նիստերը
15-ին (մեր հաշուով 3-ին): Իշխան Տէանօ կար-
դաջ տվորական պաշտօնական ճառը, որի մէջ
շատ գովասանեց Հոմերոս թագաւորին և ուղ-
ջուհեց օտարական հիւրերին: Վերջինների կող-
մից պատասխանեց կոնգրէսի ֆրանսիական ներ-
կայացուցիչ, բարօն դ'Օրբէնան: Երեկոցեան խըն-
ջուք արվեցաւ իշխան Տէանօի տանը, ուր հա-
ւաքվեցան ժողովի մօտ 70 անդամներ: Կոնգրէ-
սի նախագահ համարվում է գէնուէզեան դուքսը:
Թագաւորը մտադիր է ներկայ գտնվել նիստերին:
Անգլիական ներկայացուցչի ներքին թուով գտնվում
է և Վ. Պօլսի նախկին դեսպան սեր Հէնրի Լէ-
յարդ, որը յայտնի ի իր արած փորձաքննում
Նիւնուէում և իր սիրով դէպի հնագիտական հե-
տազոտութիւնները:

Քաղաքագէտների մէջ շատերն են պատահում,
որոնք աշխարհագրութեան մէջ առհասարակ
թոյլ լինելով, մէկ առանձին սէր ունեն որոնել և
հետազոտել հին աշխարհագրական կէտերը: Հնու-
թիւններով և հնագիտական հաղուագիտ իրե-
զէններով մանաւանդ հետաքրքրվում են քաղա-
քական գործիչները: Հնութիւնների ուսումնասի-
րութիւնը սիրելի պարագայութեան է ոչ թէ միայն
այնպիսի նշանաւոր մարդկերանց, որպիսիք են
Վլադստոն և Լէյարդը, այլ և բազմաթիւ երկրոր-
դական անձերի, որոնք ժամանակների խաւարի
մէջ որոնում են միջնորդութիւն և հանգիստ ներ-
կայի անաջողութիւնների դէմ: Արիստոկրատիայի
համար, որը իր գոյութիւնը ցնդի հնութեան վը-
րա է հիմնում, ձգտումը դէպի ամեն հնութիւն
դասակարգային սնտիպատիկան հետեւանք է:

վում էր հեռու անցեալի երակայական պատ-
կերներով, որոնց համար յարմար նիւթ էին
կազմում տեղական ասպետական ամրոցի աւե-
րակները իր խորհրդաւոր ստորկրկնայ անցքե-
րով և իր գեղեցիկ պահպանված աշտարակներով:
Հոմերոսը արդէն այն ժամանակ մեծ տպաւորու-
թիւն գործեց երիտասարդ Շլիմանի վրա, որի
մտքում արդէն այն ժամանակ տպաւորվեցան
այն նախագիծների սերմերը, որոնց իրագործման
համար այնքան եռանդով աշխատում էր վերջը:
Նրա ծնողները շուտ մեռան, թողնելով նրան
հօրեղբօր հոգաբարձութեան տակ: Իշխական
ուսումնարանը աւարտելով, տաւ և չորս տա-
րեկան երեխան պէտք է իր ապրուստի մասին
հոգ տանէր. նա մէկ փողիկ խանութ մտաւ,
որպէս հասարակ բանաւոր: Հինգ և կէս տարի
անցկացրեց նա այդ կղզոտ խանութի մէջ
ծախելով շաքար և կանաչի, ձուկը և սպիտակային
խմիչքներ. միայն մէկ լուսաւոր կէտ մասամբ
ցրվեց նրան չրջապատող այդ խաւարը. նա
պատահմամբ հանդիպում է մէկ մարդու, որը
Հոմերոսից անգիր գիտէր մի քանի զըլու-
ներ և որը մէկ բանաստեղծական կտոր ար-
տատանեց նրա մօտ: «Երեք անգամ,—պատմում
է Շլիման,—կրկնել տուցին նրան այդ աստուա-
ծային ոտանաւորները, և ես այդ բանի համար
տուեցի նրան բոլոր ինչ ունեւի» մի քանի
պֆէնինգներ, որոնցով օղի խմեցին նրան: Մէկ
նոր դժբաղդութիւն— արեւն թքել— ստորաց-
նող դրութիւնից ազատեց նրան: Նա ոտով Համ-
բուրգ գնաց, ուր իր թոյլ կազմվածքի շնորհիւ,
պարագայում չը գտաւ: Վերջապէս նրան աջող-
վեցաւ «Խօրօթեյա» նաւի վրա նաւաստիի պաշ-
տօն ստանալ, որը վիենցուէյա պէտք է ուղե-
ւորվէր: Բայց ճանապարհորդութիւնը չը յաջող-
վեցաւ: 1841 թ.ին նաւը ծովը մտաւ, բայց մի
քանի ժամանակից յետոյ Հոլլանդիայի ափերի
մօտ կանգնեց: Շլիման ամենաստտիկ գրտում

ացեալ ընկերութեանց հնօրէն ժողովը կեդ-
րոնական ժողովին ներկայաց զերջին նստին
մէջ, իւր Ատենապետ Տ. Մինաս Չերազի
ձեռամբ, Հիմնադիր, որոյ վրայ մեր տեսու-
թիւնը կը յայտնեմք յառաջիկայ թիւերով:
Տեաք երեսփոխանք, Միացեալ ընկերու-
թեանց կեդրոնական ժողովը յունիս 21-ի
նստին մէջ, երբ արդի հնօրէն ժողովն առա-
ջին անգամ կը ներկայանար ձեզ, պատուար-
ժան երեսփոխան մը գիտել տուաւ թէ չու-
նէինք ի ձեռին բաւական մանրամասն յայ-
տադիր մը մեր բունեղիք ուղղութեան նկատ-
մամբ: Չունէինք արդարեւ, և չէինք կարող
ունենալ, զի գեռ ժամանակ ունեցած չէինք
մանրամասն ուսումնասիրել ընկերութեան
ներկայ կացութիւնն, որոյ վրայ կարելի է
չափել ապագայն: Այսօր, կատարած լինելով
հարկ եղած քննութիւնն, կը փութամք
պարզել ձեր առջև մեր յայտադիր:

Տնօրէն ժողովն համոզուած է թէ Միա-
ցեալ ընկերութիւնք, որք նպատակ ունին
կրթութիւն ծաւալել Հայաստանի և Արիւ-
կիոյ մէջ, իմաստուն և ամենէն աւելի ար-
գիւնաւոր գործ մը կատարած կը լինին եւ-
թէ դաստիարակութեան նախնական աստի-
ճանները միայն մշակեն: Մեր ընկերութիւն,
որքան փայլուն ապագայ ալ որ կարենայ
ունենալ, չը պիտի կարենայ ձեռք ձգել
անսպառ գանձեր, Ասիական Տաճկաստանի
մէջ բարձրագոյն կրթութիւն ծաւալելու
համար, հսկայ գործ, որում ձեռնարկած է
Բարիդի Ուսումնասիրաց ընկերութիւնը՝ չը
գիտեմք որ աստիճան յաջողութեամբ միւս
կողմանէ, մեր գաւառացի ազգայնոց կրթա-
կան վիճակն այնքան յետնեալ է որ ընտիր
նախակրթութեան մը կը կարօտի այսօր,
որպէս կը հաստատեն մեր ստացած տեղե-
կութիւնք:

Տնօրէն ժողովն, իրաց այս վիճակին դի-
տակից, կուզայ յայտարարել ձեզ թէ իւր
յայտադիր պիտի պարունակէ լոկ նախ-
նական կրթութիւն, իւր երկու աստիճան-
ներով. նախակրթութիւն գիւղերու համար

և բարձրագոյն նախակրթութիւն կեդրոն
գիւղաքաղաքներու և քաղաքներու համար:
Մեր համոզուած եմք թէ արդի ման-
կավարժութեան և տեղական պիտոյից պա-
հանջմանց համեմատ շինուած նախակրթ-
թական և բարձրագոյն նախակրթական յայ-
տադիրներ, զորս մեր Ուսումնասիրաց ներ-
կայացուց այժմ ձեր քննութեան, լաւ պաշ-
տօնէից ձեռքով և լաւ դասաւորոց միջոցա-
ւի գործ կրուած, կրնան լիովին գոհացունել
Հայաստանի և Արիւկիոյ ժողովուրդեան արդի-
կրթական պէտքերն: Մեր համոզուած եմք
նաեւ թէ, բարձրագոյն նախակրթարանի ու-
սումնաւարտ աշակերտներն, եթէ կոչու-
մունք վարժապետութեան, կրնան մի օր
դասաւոր լինիլ գիւղական նախակրթարա-
նաց և մինչև իսկ բարձրագոյն նախակրթա-
րանաց մէջ, առանց պէտք ունենալու յա-
տուկ վարժապետանոցի:

Եթէ մեր այս յայտադիրն արժանանայ
ձեր ընդունելութեան, մեր բոլոր վարժա-
րաններն պիտի համակերպենք նմա, փակե-
լով վանայ վարժապետանոցն, որ աւելորդ
կը լինի այսուհետեւ:

Տնօրէն ժողովն գիտէ թէ վարժապետա-
նոցին փակուած ծանրակշիռ իրողութիւն մ'է.
ուստի կը փութայ պատճառաբանել իւր
առաջարկ, ձեր և Ազգին առջև ունէ
պատասխանատուութենէ զերծ մնալու հա-
մար:

Մեր հայրենեաց մէջ նախակրթութիւն
տարածելու գաղափարը նոր չէ մեզ հա-
մար: Սխալ է կարծել թէ այս գաղափարը
ներշնչուած լինի մեզ ընկերութեան արդի
նրկութեան անձկութենէն, որ կրնայ դար-
մանուել մեր ձեռք առած և ձեռք առնե-
լիք միջոցներով, օժանդակութեամբ ձեր և
Ազգին, մանաւանդ որ Լօստօնի Անգլիական
Նպաստամատոց ընկերութեան ամենէն
շնչասէր և ամենէն գործօն անդամն, Պ.
Ճէյմս Պրայս, երկու օր յառաջ առ Տնօրէն
ժողովը Ատենապետն հասուցած մի մաս-
նաւոր նամակին մէջ, նոյն ընկերութեան

յաջողութիւնը կաւետէ: Կարողասիրաց-Արի-
ւկեան և Արիւկեան ընկերութիւնք իրենց
հիմնարկութեան առաջին օրէն ընդգրկած
էին նախակրթութիւն ծաւալելու գաղա-
փարն, որ կուսակիցներն ունեցած է վար-
ժապետանոցը բացող Արարատեան ընկերու-
թեան մէջ իսկ: Տնօրէն ժողովը առնա-
պէս Արարատեան ընկերութեան 1876 զո-
տոտոս 8-ի և 1877 փետրվար 27-ի նիս-
տերուն մէջ հռչակած է զայն, Հայաստա-
նի գիւղօրէից մէջ նախակրթութիւն ծա-
ւալելու հարկին վրայ պնդելով, և ընկե-
րութեան միջոցներով կարելի եղածին չափ
շատ ազգայններ կարելի եղածին չափ շուտ
դաստիարակելու ստիպողականութիւնն ար-
տայայտելով:

Այժմ որ Արարատեան ընկերութիւնը,
միացման Պայմանագրի 2 յօդուածի գորու-
թեամբ, ձուլուած է այս միութեան մէջ
որ պարտաւոր է ազգային օգտին զօհել ա-
մեն ետեւութիւն, ձեր առջև է որ կը կրկ-
նեմք անխելի միացած ճշմարտութիւն մը,

Ասկէ գտաւ, Արարատեան ընկերութեան
ատենադրութիւնը կարգաւորելով տեսնեմք
թէ Տփղիսի ազգայններն, գլխաւորապէս
Մշակի յօդուածներէն յորդորուած, բա-
նալ տուած են վարժապետանոցն, խոստա-
նալով հոգալ իւր ծախքեր. այժմ կը տես-
նեմք թէ Մշակ և Ռուսահայք ժամանակ
մ'ի վեր սկսած են կարեւորութիւն չը տալ
այս հաստատութեան, գրեթէ բոլորովին
զաղքեցունելով իւրեանց ձեռնառութիւն,
որով վարժապետանոցի ծանրակիր բեռն
ընկերութեան ուսերուն վրայ միացած է:
Իրաց այս վիճակին մէջ, Ռուսաստանի ազ-
գայնք վարժապետանոցի փակման իրա-
ւունք տալ կը թուին և ստուգել տեղի
չունին դժգոհութեան:

Կալով Տաճկաստանի ազգայնոց, սոքա ոչ
նուազ իրաւունք պիտի տան մեզ երբ լը-
սեն մեր փաստեր, ոյց զլիսաւորներն կը փու-
թամք հաղորդել պատկառելի ժողովոյդ:
Վանայ վարժապետանոցին համար հա-

զարաւոր ոսկիներ զօհելէ յետոյ, ի՞նչ ա-
պահովութիւն կրնամք ունենալ թէ աշա-
կերտներն վարժապետ պիտի լինին:—Ոչինչ:
Հինգ զիշերօթիկ ուսանողներ ունիմք անգ,
որք խոստացած են դասաւոր լինիլ, որպէս
հասնազարեան վարժարանի ժառանգաւոր-
ներն խոստացած էին վարդապետ լինիլ.
Եթէ զրգին իրենց խոստման, ի՞նչ պիտի
կարենամք անել:—Ոչինչ: Աւելի հեռին եր-
թալով, կը յայտնեմք Ձեզ թէ, Արարատեան
ընկերութեան 1877 նոյեմբեր 27-ի նստին
մէջ, Գործադիր ժողովն ներկայացուցած է
մի տեղեկագիր, ուր հռչակած է թէ վա-
նայ կեդրոնական վարժարանի ձրիավար
աշակերտներն ազատ են վարժապետ, եր-
կրագործ կամ վաճառական լինիլ. արդ, ե-
թէ վարժապետանոցի աշակերտներն, այս
պաշտօնական յայտարարութեան յետով,
երկրագործ և վաճառական լինին ամբող-
ջապէս, ընկերութիւնն անուանական վար-
ժապետանոց մ'ունեցած չը լինիր արդեօք:
Եւ միթէ ձեր մտադրութեան արժանի չէ՞
սա իրողութիւնը թէ Հաճընի մի բարձրա-
գոյն նախակրթարանն, որ վարժապետանոց
չէ, արտադրած է աշակերտներ որք այսօր
ընկերութեան միւս վարժարանաց մէջ դա-
սաստուութեամբ կը զբաղին:

Վարժապետանոցի հաստատութեան նը-
պատակն եթէ տնտեսական առաւելութիւն
մ'է, կը մտածեմք որ, թէեւ ստոյգ լինի
տեղացի վարժապետներու նուազ թոշակով
շատանալն, սակայն ուղիղ տնտեսութեան
հակառակ է մի քանի վարժապետներէ
ամսական 1—2 ոսկի զեղչելու հաւանալա-
նութեան համար կանգուն պահել մի
հաստատութիւն որ կը լափէ հազարաւոր
ոսկիներ:

Վարժապետանոցի հաստատութեան նը-
պատակն եթէ կրթական առաւելութիւն
մ'է, կը մտածեմք թէ այս յոյս չափազան-
ցուած է, զի գրեթէ անհնար է ձեռք բե-
րել այդ առաւելութիւնն ընկերութեան
տրամադրութեանը տակ գտնուած միջոց-

մինչև Ամստերդամ գնաց, ուր աղքատութեան և
զրկանքների աղբեղութեան տակ իրանդ ձեւա-
ցաւ, որ գոնէ ժամանակաւոր ապաստան գտնէ
հիւանդանոցում: Այնտեղ նա բարեբար ունեցաւ,
որը մէկ աւետարական տան մէջ ցրվողի տեղ
գտաւ նրա համար: Այդ ժամանակից է սկսվում
նրա ինքնուրոյն և եռանդով կեանքը: Նա մօտ
800 ֆրանկ ուսման եկամուտ ունէր. այդ փողերի
կէսը իր կրթութիւնը շարունակելու միջոցների
համար նշանակեց: Նրա նրկական պահանջները
բաւականացնում էին միայն ամենամանրագիշտ
բաժնով: Նա չուտով կատարելագործեց իր գրու-
թեան ձեր, սկսեց լեզուներ սովորել, մանաւանդ
անգլիերէնը և ֆրանսերէնը: Այդ լեզուներից
իւրաքանչիւրի ուսումնասիրութեան համար նշա-
նակեց վեցամսեայ ժամանակամիջոց. վեց վեց
շաբաթ գործ էր անում հոլանդական, սղանիա-
կան, իտալական և պորտուգալեան լեզուների
սովորելու համար: Ելիման, վերջապէս, Երեւելը
և Բնիկ. առեւտրական տան մէջ հաշապահի և
թղթակցի պաշտօն ստացաւ: Այդ ֆիրման յա-
րաբերութիւններն ունենալով Ռուսաստանի հետ,
առուաց լեզուի պահանջ զգացվեցաւ: Ելի-
ման սկսեց առուաց լեզուն սովորել իր սովոր-
ութեամբ, առանց վարժապետի, ձեռքում ունե-
նալով Տէլեմաքի մէկ ինն և վատ թարգմանութիւն:
Էյն կարծում էր, որ գործը շուտ և յաջող կեր-
թայ, եթէ եւ Տէլեմաքի պատմութիւնը կը պատ-
մած մէկին ուսուցէին. եւ մէկ աղքատ հրէայ
վարձեցի, որը շաբաթը չորս ֆրանկով, զալիս էր
ինձ մօտ ամեն օր երեկոյան և երկու ժամ շա-
րունակ լսում էր իմ նրան անհասկանալի դէկ-
լամացանք: Այդպիսի վարժութիւնները հարեան
բնակիչներին ներգրծիւն էին պատճառում, և
այդ բանի համար մի քանի անգամ ստիպված
էի բնակարանս փոխել. բայց և այնպէս, վեց
շաբաթից յետոյ, նա կարող էր արդէն առաջին
առուերէն նամակը գրել:

Ռուսաց լեզուի գիտութիւնը հիմք դրեց Ելի-
մանի ինքնուրոյն առեւտրական ասպարէզին:
1846 թւին վերայիշեալ ֆիրման աղէտ ուղար-
կեց նրան Պետերբուրգ, ուր նա արագ կերպով
իրան համար անկախ գրութիւն կազմեց: 1852
թ. նա գործը մեծ չափերով էր առաջ տանում:
Չինուորական մի քանի նրկների առեւտրը
կրիմի պատերազմի ժամանակ մէկ տարվա ըն-
թացքում նրա առեւտրը կրկնապատկեց. նրա
խօսքերով, այդ ժամանակը բոլորովին ա-
զատ միջոց չունէր և մինչև անգամ լրացի-
րներ էլ չէր կարողանում կարգաւ, գրքերի մասին
չը խօսեցի: Բայց իսկոյն խաղաղութիւն կա-
պելուց յետոյ, նա նորից սկսեց լեզուներ ու-
սումնասիրել: Այդ ժամանակ այլ ևս գործնա-
կան նպատակներ չունենալով, նա սկսեց հին
լեզուների՝ լատիներէնի և յունարէնի ուսում-
նասիրութիւնը: 1858 թւին, նրկական կողմից
իրան բոլորովին ապահովված տեսնելով, ցանկա-
ցաւ ճանապարհորդել. նա բոլոր Եւրոպայի մի-
ջից անցնելով, գնաց Եգիպտոս, Սիրիա (ուր սո-
վորեց արաբական լեզուն) և Փոքր-Ասիա:
Աթէնքից մտածում էր նա իթակէ կղզին
ուղևորվել, բայց այդ ժամանակ մէկ զատ
բացվեցաւ, որը ստիպեց նրան Պետերբուրգ
վերադառնալ: Կատը երկար էր շարունակվում,
և այդ ժամանակ Ելիման նորագից իր կանգնե-
րած առեւտրական գործը, այս անգամ արդէն ա-
հագին չափերով: 1861 թւի մայիսից մինչև հոկ-
տեմբերը Ռուսաստանի համար նրա բերել տուած
ապրանքների արժէքը 10 միլիոնից աւելի էր:
Բացի լեզակից, նրա առեւտրի գլխաւոր առար-
կաներն էին թէյ և բամբակ: 1863 թւին Ելի-
ման արդէն այնպիսի գրամագրու ունէր, որը
գերազանցում էր բոլորին, ինչ որ նա երբ և իցէ
կարող էր հրապել: Ներկայումս նրա տարեկան
եկամուտը 200,000 մարկ է: Իր դատի յաջող
վարձանից յետոյ, Ելիման թողեց իր առեւտրա-

կան գործերը իրան նուիրելու երիտասարդութեան
ժամանակ ունեալ իղէաւնրին: Նա կատա-
րեց իր առաջին ճանապարհորդութիւնը աշխարհի
չորս կողմը, որից յետոյ լոյս տեսաւ նրա առա-
ջին հեղինակութիւնը Չինաստանի և Եսպանիայի
մասին: 1866 թւին նա փարիզ բնակվեցաւ, ծանր
պատրաստութիւններ տեսնելու կապիքական հը-
նութեան շրջանում ձեռնարկութիւններ անելու
համար: Բոլոր իր առեւտրական գործերը վեր-
ջացրած էին և կարծես քնված. բոլորովին նոր
կեանք սկսվեցաւ նրա համար:

Ելիման, որպէս գրական, գործնական մարդ,
յուսադրվում էր գտնել և որոշել բուն յունա-
կան պոէզիայի մէջ ինչպիսի տեղերը. նա չէր
հաստատում, որ Հոմերոսի բանաստեղծական պատ-
կերները, նրա տեղերի և անցքերի գեղեցիկ նը-
կարագրութիւնները կարող են հնարովի լինել:
Ոչինչ աւելի: 1868 թւին նա նորից Փոքր-Ա-
սիայում էր գտնվում, շրջեց բոլոր ծովափնեայ
կղզիները, ուսումնասիրում էր իթակէի, Մի-
կէնի և Տրոյան դաշտավայրի հողը, Հոմերոսի
նկարագրութիւնները վերայիշեալ տեղերի իսկա-
կան պայմաններին հետ համեմատելով, նա հա-
մոզվեց, որ հին Տրոյայի հետքերը անհրաժեշտ է
որոնել Հիսարիկ բլուրի վրա: 1871 թւի աշ-
նանը սկսեցին փորութիւններ անել: Մօտ 150
բանուորներ, Ելիմանի առաջնորդութեամբ, ան-
հաղար մասնակցում էին աշխատանքներին: Նը-
կու տարուց յետոյ երեքսնս բերդի պատնէշի
մասերը, յետոյ քարած փողոց, և վերջապէս,
մէկ մեծ շինութիւն, որը, Ելիմանի կարծիքով,
Պրիամի պալատը պէտք է լինի. իսկ մի քիչ
ժամանակից յետոյ մէկ ամբողջ գանձի հետք
գտան, որը իր ժամանակին յաջողվեցաւ ծած-
կել բանուորների խմբից: Բանուորները փորելու
ժամանակ հանդիպելով մէկ մեծ ամուր առար-
կայի, կարծես պղնձից, չուտով ընդհանուր ճաշի
կանչվեցան, իսկ Ելիման և իր աշխատակից կի-

նը շտապեցին գուրս փորել և ջուկել մէկ նշա-
նաւոր մասսա բրոնզայի, ոսկեայ և արծաթեայ
իրեղներին: Կա հռչակաւոր Պրիամի գանձն:
Էր—ուղիղ հաստատութիւն հոմերական ասա-
ցուածների, ճարտարախօս վկայութիւն հեռաւոր
անցքերի, որ մինչև այդ ժամանակ դիցաբանա-
կան, առաստելական ժամանակներին էին վե-
րաբերում: Հին Տրոյայի և մանաւանդ այդ թան-
գաղին գանձերի գիտը վերին աստիճանի հե-
տաքերից ամբողջ լուսաւորված աշխարհ և
միանգամից փառաւորեց Ելիմանի անունը: Թիւր-
քաց կառավարութիւնը պահանջում էր յօգուտ
իրան բոլոր գտնվածի կէսը. զատ սկսվեցաւ և
վերջացաւ նրանով, որ հետազոտող կամաւորա-
պէս իր միջոցներից մի որոշեալ գումար վճարեց
Բ. Կրանը: Հիսարիկի չլվականերում գտնվեցան
Հոմերոսի հերոսների գերեզմանները, գինու-
րական պատկանելիքներով վաճառներով և զեն-
քերով: Մի խօսքով մէկ ամբողջ գիւցազնական
բանաստեղծութիւն, որը մեզ երեւում էր որպէս
Ֆանտազիայի ստեղծագործութիւն, բարձրացաւ
բոլոր կրթված մարդկութեան հայեացքների ա-
ռաջ, նորից Ելիմանի եռանդին և աշխատու-
թեան: Տրոյական վերջին փորութիւնները կա-
տարվում էին 1879 թւին, և նրանց բոլոր ընդ-
հանուր եղանակներով բանարմատները նը-
կարագրված են վերայիշեալ գրքի մէջ: Նրա նը-
ման հետազոտութիւններ սկսվեցին և Փոքր-Ա-
սիայի այլ տեղերում և ծովափնեայ կղզիներում.
այդ ժամանակ, Միկէնում, չբեղ մահաբաններ
են գտնված, ուր պահպանված է մէկ նշանաւոր
գերեզման, որի մէջ, Ելիմանի ենթադրութեամբ,
Ագամեմնոնն է եղել թաղված:

ներով և Հայաստանի խորն եղող մի քաղաքի մէջ, ուր այնքան դժուար է ուսուցչական ընտիր մարմին մը համախմբել և կրթական բարձրագոյն միջոցներ հայթայթել: Տեսչական տեղեկագիրներէն կիմանալով թէ վարժապետները բարձրագոյն կարգի աշակերտներն 16 տարեկան պատանիներ են ընդհանրապէս, ուրեմն, մի տարի է, նոքա պիտի աւարտեն դպրոցական շրջանն և պիտի լինին 17 տարեկան ուսուցիչներ. չը գիտեմք թէ ինչ կարելի է անկալել այսքան մանուկ վարժապետներէ, եւթագրեւով իսկ թէ հանձար ունենան, մանաւանդ այսուհետեւ որ հայաբնակ գաւառացի մէջ գաւառիկներու պաշտօն վարող անձ մը պարտաւոր է շրջահայաց խոհանարարութիւն ունենալ, տեղի չը տալու համար այն անհիմն և անիրաւ կասկածներուն՝ որք այսօր դժբաղդաբար կը ծանրանան Վանայ վարժապետանոցին վրայ և որք դուցէ ամբողջ ընկերութեան կը սպառնան:

Տնօրէն ժողովն կը կարծէ թէ Միացեալ ընկերութիւնը, որք նպաստ կանխկալին մի աղքատ ժողովուրդէ, և որք, իրենց պահեստի գումարը կիսելու մտեցած, 5 ամսուան ծախուց բաւելու չափ ստակ հազիւ ունին այսօր, այնքան ձիգեւով հաւաքուած լուծար շաւորէն վատնած կը լինին եթէ շարունակին Վանայ դպրոցի 59 ուսանողներուն համար զօհել տարեկան 700 ռուսներէն ոսկի, մինչև Ալիւրի 128 ուսանողներն կը կրթութիւն տարեկան 30 ոսկիով, որ գրեթէ կը նշանակէ դաստիարակել Ալիւրցի աշակերտն տարեկան 1 մէծիտով և Վանցի աշակերտն 60 մէծիտով, կամ 1 դպրոցի և 59 ուսանողի մի քիչ բարձր կրթութեանն յատկացունել մի գումար որով կարելի է հոգալ 23 նախակրթարաններ և 3,500 ուսանողներ:

Եւ ինչ դայթակողութիւն ազգին առջև, երբ իմացուի թէ վարժապետանոցի 67 ուսանողներէն 40-ը հարուստ և լոկ 27-ը աղքատ ծնողաց զաւակ են, ըստ նախորդ տնօրէն ժողովոյ մի պաշտօնագրին. մանաւանդ որ վարժապետանոցի բարձրագոյն դասաւանդներէն մին կը գրէ մեզ. «Հաւատացէ՛ք թէ աշակերտաց ամբողջութիւնը հարուստի տղաներ են, անպայման վարժապետանոց առնուած են. այս աշակերտաց ոչ մին գրեթէ դասատու ըլլալու մը տալիս է. աղքատներէն երեք կամ չորս հօգի կը գտնուին» Եւ ինչ ամօթ մեզ համար, երբ յիշեմք թէ այս մեծատանց կը բաշխուի այն գումար՝ զոր ամեն ձեռք կը հայթայթէ մեզ պարահանդէսէն...

Տնօրէն ժողովոյ խիղճը չը ներեր շարունակել այս ընթաց և դպրոց բանալ անդ ուր կայ արդէն, ձեռնպահ մնալով անդաւրոց փայրերուն մէջ, ուր կրթութեան անունն իսկ չէ լուսած, որ, պարզ խօսելով, կը նշանակէ սե. հաց ունեցողին ձերմակ տալու ջանալ, փոխանակ սովեալին սե. հաց հայթայթելու: Վան հարուստ է և պէտք չունի մեր նպաստներուն, զորս արդար է յատկացունել այն աղքատ գաւառներու որք ամեն օր խնամ և օժանդակութիւն կը խնդրեն մեր ընկերութենէն, և որոց ստիպուած եմք ժխտական պատասխաններ տալ ցաւօք սրտի վան լուսաւորուած է բաւական իւր տեղական դպրոցներով, որոց հասուցած աշակերտներէն ոմանք դասատու են մեր վարժապետանոցին մէջ, և Արարատեան ընկերութենէն ի վեր թափուած ձիգեւուն շրջանորհ, ունի այսօր միվիճակ որ կարող կընէ զայն ինքնօգնութեամբ յառաջանալ

այսուհետեւ, մինչ կան մեր հայրենի հողին վրայ բազմաթիւ գաւառներ, որք բոլորովին անլոյս մնացած են և պէտք ունին արտաքին օգնութեան: Վան, որ ունի իւր ընկերութեան և Արարատեանցիներ, պէտք չունի մեր առաջնորդութեան, ում սակայն կը կարօտին մեր այնքան լքեալ արեւակիցներ: Եւ, եթէ հարկ է անաշտութեամբ ամբողջացունել այս բազմաթիւութիւն, Վան մասամբ ապերախտ գտնուեցաւ անձնուէր փորձուողներին և մինչև իսկ ընկերութեան գէմ՝ նման Ալաշկերտի և Մարաշի որք չը պիտի մնան անպատիժ եթէ չը գան ուղղութեան, մինչ շատ քաղաքներ և գիւղեր ընտիր տրամադրութեամբ և թաւանազին կը դիմեն Միացեալ ընկերութեանց հոգատարութեան:

Եթէ ընկերութեան դպրոցներէն մին պակեցունելը կը տխրեցունէ ըզմեզ, միւս կողմէն կը միջնորդութեամբ մտածելով թէ Վանայ վարժարանի փակման առաջարկին հետ բերինք ձեզ այսօր չորս նոր վարժարաններու բացման աւետիսն, վարժարաններ որք, ծախուց անշան յաւելում մը պատճառելով մեզ, նախակրթութիւն պիտի ծաւալեն Բաղէշի իգական սեռին մէջ, շնորհիւ Սովետի ցանձնաժողովոյ բազմադիւն անձնուիրութեան, և Գովատրեւի, Չէվրիմի և Խօջմաթի արական սեռին մէջ, շնորհիւ տեղացեոց ուսումնասիրութեան: Ուրեմն Միացեալ ընկերութիւնը, մեր առաջարկն ընդունելով, 28 կրթարանի փոխարէն պիտի ունենան այսուհետեւ 31 կրթարաններ:

Ասկէ գտաւ, միջոցներ ձեռք պիտի առնուէր որպէս զի մեր վարժապետանոցի ուսանողներն չը վնասուին: Ցերեկօթիկներն կրնան արդէն շարունակել իւրեանց ուսումներ Վանայ ազգային վարժարանաց մէջ, որք այնքան նշանաւոր անձինք ընծայած են ազգին, իսկ 5 գիշերօթիկ ներքէն, որոց համար ծախքեր եղած են ցարդ, կրնամք երեքը, որք կրտսեր են, փոխադրել Կոփայ մէջ մեր ունեցած գիշերօթիկ վարժարանն, և երկու դարգացեալներն փոխադրել Էջմիածնայ Գեորգեանն, Վեհափառ Կաթողիկոսի նախապէս տուած արտօնութեան համեմատ:

Ամփոփելով մեր խօսքեր, կը կրկնեմք ձեզ թէ Վան քաղաքը պէտք չունի Միացեալ ընկերութեանց, որոց սակայն կը կարօտին մեր հազարաւոր եղբայրներ և քոյրեր, այնպիսիք որք գրեթէ օտարացած են ազգութենէն, կրօնէ և լեզուէ, և որք մեր օրով և մեր աչքին առջև կը կորչին հետզհետէ: Ո՞վ պիտի խնամէ գանձը, ո՞վ պիտի լուսաւորէ գանձը, ո՞վ պիտի հայացնէ գանձը և ո՞վ պիտի հասկաննէ նոցա թէ պաշտպանեալ են:—Ազգային արդի կացութեան մէջ, մեզ անկ է այս պաշտօն: Մեզ անկ է երթալ թշուառներուն, լոյս տալ տգէտներուն և յոյս լքեալներուն: Եթէ չաւրեանկեմք հարուստին բաշխել ինչ որ կը զլանամք աղքատին, ծանր պատասխանատուութիւն պիտի հրաւիրեմք մեր վրայ:

Տնօրէն ժողովն, խորշելով այդպիսի պատասխանատուութենէ մը, ձեր գաղափարներն կենթարկէ այն յայտագիրը զոր պարզեց ձեր առջև: Վճիռ արձակելէ յառաջ, յիշեցէ՛ք, Տնօրէն երեսփոխանք, թէ Ազգին առջև եմք և թէ Ազգն է գերագոյն դատաւոր մեր և ձեր վրայ:

(Մասիս)

ՆԱՍՏԱԿ ԹԻԻՐԻՍԻՍԻՑ

Կ. Պոլսի, 30 օգոստոսի

Ինչպէս գրել էի «Մշակին» թէ հայոց հարցը 15 օրից յետ կը մտնէ պաշտօնական բանակցութիւններ շրջանը, ճշդութեամբ այդպէս եղաւ. ամսիս 28-ին ժամի երկուսին կէսօրվանից յետ, որ ըստ տաճկաց ժամ 9½ կանէ, հինգ մեծ պետութիւններ Ներկայացուցիչները առաջի նիստը ունեցան ռուսաց դեսպանատանը հայոց խնդրի մասին: Արդէն գիտէի Ներսէս պատրիարքից, որ մեր խնդրի ինքնիշատիչ պիտի առնէ ռուսաց դեսպանատունը, որը ամենայն իրաւամբ աւելի շահ ունէ Ռուսիայի միջոցն ու կէս հապտաների երեք միլիոն արեւակիցների վիճակը բոլոր առնելու մէջ, ըսն թէ Անգլիան կամ ուրիշ: Այսպիսով հինգ մեծ տէրութիւններ լիազօրներ, բոլորն էլ լի ամենայն համակրանքով դէպի մի թշուառ և որք ազգի դատը առաջի որոշումը կայացրին ռուսաց դեսպանատանը, որին պիտի այնչափ ուրախ լինի ի հարկէ իւրաքանչիւր ռուսաստանցի հայ, որը Ռուսաստանի պատի համար թափած իր արեւան կաթիլները այս օր վարձարարելիս է տեսնում իր մարդասեր տէրութեան ազգու միջամտութեամբ ի նպաստ Հայաստանի փրկութեան:

Առաջի նիստի մէջ կայացրած որոշումը որչափ էլ հետաքրքիր լինի ձեզ համար իմանալ իր մասնաւորութեանց մէջ, դարձեալ ձեզ շատ լաւ յայտնի պիտի լինի որ այդպիսի բաներ շատ հեշտութեամբ մտաշնչի չեն հասարակային գիտութեան: Այսուամենայն իմ իմացածիս չափ այդ որոշումը կայացած է նորա մէջ, որ անմիջապէս խմբագրով ծանուցագիր թիւրքիսի տէրութեան, որի մէջ առանց որ և է աւելորդաբանութեան կարճ ու կարճի կերպով պատասխան պահանջի այն ամբողջ շարք հարցերի, որոնք կառավարիչին ծանուցագրի մէջ ամենայն խստութեամբ և էներգիայով: Տարակոյս չը կայ, որ այդ հարցերը այնպիսի կերպով են ձեռնարկուած, որ էլ երկդիմի և օգային պատասխանին բնաւ չը պիտի կարողանան հանդուրժել: Ուրեմն երկու-երեք օր դուցէ չի անցնի, որ հեռագրեր ձեզ հաղորդէ այդ յիշատակագրով սկիզբ առած հայոց հարցի պաշտօնական յոգումը:

Մի կողմից, այս, պարագաները քիչ ուշացած են հայոց հարցի այս տարուայ մէջ վերջնալու համար, որովհետեւ ամառը արդէն անցած է և մօտ Հայաստանի դառնաշունչ ձմեռը, որ կարող է բաւականին արգելաւիթ լինել բարենորոգմանց գործերի համար, բայց միւս կողմից ամեն բան կարելի է դեսպաններ յարմարութեամբ ինչ, որը, փառք Աստուծոյ, շատ զօրեղ կերպով նպաստաւոր է հայոց դատը քաջբերաններին չը գցելու համար: Նախ լորդ Կիլիֆերինը պիտի աշխատէ երեսպարզ դուրս գալ Անգլիայի ժողովրդի առաջ, որը այնչափ դուրեց և շնորհակալ եղաւ Գօշկից, որի ներկայութեամբ Կ. Պոլսի մէջ երկու մեծ հարցեր լուծվեցան: Ի հարկէ լորդ Կիլիֆերինը չի ուղի, որ Անգլիայում անեն թէ նա մի հատ հարց էլ չը կարողացաւ վերջացնել: Միւս կողմից ֆրանսիական դեսպան պ. Տիսսոն շատ հաշիւներ ունի տաճկաց հետ, որոնք այնչափ խոնարհացրին նորա ազգային և անձնական արժանապատուութիւնը, չարժանացնելով նաեւ սովորական ընդունելութեան, երբ նա ուղուէ կը մնաք բարով ասել, երբ մի երկու ամիս առաջ հրաժեշտով Ֆրանսիայն էր գնում:

Ասում են այդ վարմունքից յետ նա որոշեց էլ դեսպան չը մնալ Կ. Պոլսի մէջ, բայց ինչպէս գիւրդագրաց և պատուաճանաչ ֆրանսիացի դիտմամբ վերադարձաւ ժամանակաւորապէս իր տեղը, որ դառնայ իր վրէժը առած թիւրքերից, ահա այժմ ներկայացաւ նորան իր ցանկացած աւելի վրէժը լուծելու համար և եթէ կարողացաւ նա լուծել այդ վրէժը հայոց հարցը լուծելով, թող այդ վրէժը Աստուածային լինի, այլ ոչ սովորական մարդկային...

Այս ամենը դիցուեք թէ չափ լաւ, բայց այսպիսի մի մեծ բողբոս միշտ է չինում նոյն ինքը մեր ազգը, երբ նորա արժանաւոր պատրիարքը երկու ձեռքով կպած մեծ պետութիւնների ետ խին. «Կրկնե՛ք Հայաստան» և կրկնում այնչափ յանդուգն յամառութեամբ. քնչ է չինում, ատում եմ, այսպիսի ժամանակ նոյն ինքն ազգը Կիլիֆերին է: Պոլսի մէջ չունենալով ոչ մամուլ, ոչ ուրիշ տեսակ առաջնորդներ, նա օրօրում է իրան զանազան իմաստասիրի ճառերով և անմիտ բանաստեղծութիւններով, բայց ինչ է չի-

նաւ հայ ժողովուրդը կողմասի մէջ, ունենալով փառք Աստուծոյ և շատ աւելի խելք, շատ աւելի զարգացում և արժանաւոր հրապարակախօսներ: Ինչպէս է շարժվում կողմասի հայ ժողովուրդը. գտնէ մեր տեսնելով, բերանը բացած նա միայն յօրանջում է. կարծես քունն է գալիս, երբ նորա հետ խօսում են իրանց օրգանի վիճիչ նայի մէջ օգնութիւն հասցնելու վրա: Միթէ այնչափ անսիրտ կարելի է կարծել կողմասի հայրին (խօսքը ի հարկէ հարուստների վրա չէ, որոնք ոչ խիղճ ունեն և ոչ սիրտ), որ նոքա անտարբեր կերպով կը նստեն կը նայեն այն ժամանակ, երբ աշխարհն ստեղծվելուց յետ հայրին ջատագով մի հատ օտար գրող գտնվեցաւ, միթէ կարելի է թող տալ մտածել, թէ այդ գրողը պաշտպանութիւն չը պիտի գտնէ չորս հինգ միլիոն հայ ազգի կողմից. լաւ ազգ կը լինենք այն ժամանակ ոչ միայն այդ օտարի, այլ ևս բոլոր օտարների առաջ, երբ «Journal d'Orient» կը հրատարակէ մի օր թէ «ոչինչ իւրաքանչիւս չը գտնելով հայոց կողմից, ևս դադարում եմ նոցա հետ որ և է առնչութիւն ունենալուց»: Լաւ ազգ կը լինենք այն ժամանակ...

Ոչ, այսչափ խայտառակութեան բնաւ չեն թոյլ տայ համեն մեզ այն ազնիւ մարդիկ, որոնք «Մշակի» խմբագրատունը հեղեղելին իրանց նուէրներով յօգուտ իրանց տաճկաց տովեալ եղբայրներին. երբ այդ ազնիւ մարդիկ դեռ կենդանի են, վնասովեւ ոչինչ չունենք գեռ: Երկվայ «Journal d'Orient»-ում կարողացի մի բոցային հրակ, դէպի ամբողջ մարդասեր Եւրօպան ձեռք կառկաւելու և փրկելու խեղճ դարևոր նահատակներին մարդկայրժան և աշխարհաւոր բարբարոսների ձեռքից: Քանի զընում է մեր այդ կերպով օրգանը աւելի է ողբերկում և աւելի վնասութիւն ստանում ամբողջ Եւրօպայի առաջ խօսել յանուն հայերի. միթէ այսպիսի ժամանակ ամբողջ մի քանի տասնեակ բաժանորդներով պիտի միայն բաւականանանք. միթէ չորացան այն ձեռքերը, որոնք հազարներով ընծայ կը տան օտար անձնավաճառ կանանց, բայց անշարժ կը մնան, երբ խօսքը կը գայ ամբողջ հայոց ազգի դատին փառաբան կանգնած մի գրողին...

Հենց այսօր տեղեկանալով ամենասեծ բաւականութեամբ կը շտապեմ հաղորդել ձեզ թէ «Journal d'Orient»-ի անարգել Ռուսաստան մտնելու համար արդէն կարգադրութիւն է աւել մեր տէրութեան վիճիչայի ներկայացուցիչը, որի սիրալիւ ռուսացութեան համար ի հարկէ շատ երախտագետ պիտի լինեն հայերը: «Journal d'Orient»-ի այս օրվայ համարի մէջ ևս չընորակաւորվել է յայտնած վիճիչայի ռուսաց դեսպանին նորա ցոյց առած սիրալից միջամտութեան համար: Ուրեմն հիմա կողմասի հայրը առանց որ և է դժուարութեան կարող են ստանալ «Journal d'Orient», որը ճանաչված է ինչպէս ռուսաց և հայոց հաւասար բարեկամ: Չը մոռանամ ասել ձեզ մի հետաքրքիր նորութիւն. մեր բարեկամ գօկտօր ֆելժիմալեան այսօր առաջարկեց Միացեալ ընկերութեան ընդհանուր ժողովի մէջ ուղարկել երկու ներկայացուցիչ այս տարվայ թիֆլիսում լինելի վարժապետական ժողովին: Միացեալ ընկերութիւնը ընդունեց այդ առաջարկութիւնը, հեռագրելով այսօր թիֆլիսի թեմական տեսչին թէ երբ կը լինի ժողովը: Ուրեմն առիթ կունենաք չուտով տեսնել այստեղի մանկավարժների երկուսին և ճանաչել նրանց:

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 սեպտեմբեր: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. 62 Կ., երկրորդ 94 ռ., երրորդ 94 ռ. 75 Կ., չորրորդ 93 ռ. 75 ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակր արժէ 226 ռ. 50 Կ., երկրորդ 220 ռ. 50 Կ., երրորդ 91 ռ. 25 Կ., երկրորդ 91 ռ. 26 Կ., երրորդ 91 ռ. 25 Կ., օսկի 7 ռ. 66 Կ.: Ռուսաց 1 ռ. 1օնգոնի վրա արժէ 25,81 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա արժէ 272 ֆրանկ 25 սանտիմ: Բօրայի տրաւմագրութիւնը թոյլ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ
քան թէ ուրիշ տեղ. Թէ՛, կախա, ՇՕԿՈՒՄ, Բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժաններ, բոկալներ, թէ՛յամաններ, սու- ղոկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուսնալու ամաններ, ԿՈՂՊԵՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱՆՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱ- ՑԱՆՆԵՐ, ԲԵՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէնկա, ԹԱՄԲԵՐ, ամաններ, ութնոն, ՄԱՀ- ձԱԿԱՆՆԵՐ, երեսբիշներ, թաշկինակներ, կանանց գուլարներ, մարգերանց գուլարներ, տուալետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խնայի դինի, պորտ- վէյն, խերես, կոնյակ և 1,000 այլ առար- կաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականնե- րին ՄԵԾ քանակութեամբ ծախում է **ԹԷՅ** պուրկերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆուտերով 1 ր. 1 ր. 10 ր., 1 ր. 20 ր., 1 ր. 40 ր., 1 ր. 60 ր. և 1 ր. 80 ր., իսկ ամենաբարձր թէ՛յը ֆուտեր 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարա- նից 120 ր., բէ՛յովներն 4—34 ր., ԲՈՒԼ- ԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թա՛մ- բեր 65 ր., շէֆիլդի դանակներ 3 ր. 50 ր. դիւթիներ, այբօմներ կիսագնով, ֆիլորա- ներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացան- ների և բէ՛յովների թիֆլիսում: 10—100

ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒԹԵԱՆ ՀԱ- ՄԱՐ ՏԵՐ-ԵՋՆԻԿԻ աշխատասիրութեամբ հետե- լեալ ձեռնարկները վաճառվում են բացառապէս «կովկասեան» Զաքար. Գրքորենի գրադաճա- ռանոցում:
1) Գառազիրը հայկ. ձայնագրութեան . . . 30 ր.
2) Մանկական ձայնագրերի երգարան . . . 40 ր.
3) Մանկական երգարան առանց ձայնա- գրութեան . . . 20 ր.
4) Խմբական երգեր ձայնագրերի քառա- ձայն . . . 50 ր.
Գումարով առնողներին գիշումն կը լինի: 9—10

144 Արժուէնու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեքէլի և հայեկներին:

Յայտնում ենք թիֆլիզում և զաւառնե- րում մեր ծանօթ պատուիրողներին, որ Ախալցխայից վերադառնալով թիֆլիզ Գա- նօվսկայա փողոցի վրայ՝ իշխանուհի Բէհ- բուդեանցի շինութեան մէջ բաց կ'ը արել խանութ, որտեղ սեպտեմբերի 10-ից կը սկսենք կանանց հագուստներ ձեւելու և կարելու պատուէրներ ընդունել: Նոյնպէս պատրաստ ենք մեզ պատուիրող զաւառացի- ների համար ուղարկել ամեն տեսակ գերի- աների զարդեր, գլխարկներ, գլխի և պսակի ծաղիկներ, շիբլիաներ, ձեռնոցներ, հովա- հարներ, փողպատներ, սպիտակեղէններ, կշօրիներ և այլն:
Դերձակ Գրիգոր և Շուշանիկ Անեանց

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԳԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբա- ներ, կոնֆետներ, ԿՍԿԱՍ, բրինձ, Ա- ՄԱՆԵՂԷՆ, բոկալներ, թասեր, երես լուս- նալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судна), մատուցարան- ներ, ԿՈՂՊԵՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակ- ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՎՕԼՎԵՐՆԵՐ, այբօմ- ներ, ՄԱՀձԱԿԱՆՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, արիօ, պա- ռուսին, թաշկինակներ, երեսբիշներ, կլե- ռա, գուլարներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՅՆ, խե- ռես, կոնյակ և այլն: ԹԷՅ մեծ քանակու- թեամբ ՎԱՅՈՒԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒՂԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**: Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մա- գնեզիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէժ, ԽԵՆԱՅԻ գի- նի ջրով դէժ, կարբօնատն ֆՕՇԻ, հեղուկ և ՄԱՊՕՆ, բժշկական թուղթ փառերկրօգի- տի համար, պարսկական փօշի: 64—100

ՏՆԱՅԻՆ ԴԱՍԵՐՈՎ
Ցանկանում է պարապել Ներսիսեան գրողից աւարտած մի փորձում և հմուտ ուսուցիչ ԱՄԵՆԱԶԱՓԱՌՈՐ ԱՄ- ՍԱԿԱՆՈՎ:
Ցանկացողներին խնդրում է հասցնել թղթիկ պ. Շաշի բրդե աւրի պովի- լիսում կամ «Մշակ» խմբագրատանը: 5—5

ԿՈՒՄԻՍ ԿՈՎ Ի ԱՆԱՐԱՏ ԿԱ- ԹԻՅ
Այս համեղ և առողջարար խմիչքը պատրաստում է ՎԱՐԹԱՆԱՍԵԱՆՔԸ բժշկա- կան խորհրդի թղթաւորութեամբ: Կուժիսի գործատուներ և կաթնատուներ գտնվում է Դաւիթօվսկի փողոցում պ. Գանանեանցի տանը, որ գտնվում է Շիօեկի տան ետե- Պ. պ. ցանկացողները ամեն ժամանակ կա- րող են ստանալ թարմ կուժիս նոյն իսկ կաթնատան մէջ զաւաթներով 7 ր. արժե- քով և շիշերով 25 ր. արժ.: Հետեւ քա- ղաքներ տանելու և երկար ժամանակ պա- հելու համար պատրաստում է զօրեղ կու- միս, որի շիշը արժէ 50 ր. ամանով:—
Ա. Վարժանեանց 2—4

Փոքր Բեգդէհէմի բուշումն գտնվում է դատարի երկու ՍԵՆԵԱԿ և մի դահ- լիժ իւր խոհանոցով, պատկանում է բարե- կրօն Գէորգ քահանայ Աբուլիանց: 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԸ ԵՒ ԷՋ- ՄԻԱԾԻՆԸ»
Վերնագրով գրքերը, էջմիածնի և առ- փառանքների փմնագրական պատկերով: Թիֆ- լիսում ծախվում է Կենտրոնական գրադա- ճառանոցում, իւրաքաչիւրը 30 կոպէկով: Օտարաքաղաքացիք 10-ից ոչ պակաս ցան- կացողները առանց փոստայի ծախքը հո- ղալու, կարող են դիմել Մնացական Բէգ- լարեանցին հետեւեալ հասցեով. Въ Тиф- лисѣ, Верхняя Таможенная улица, № 31, Мнацакану Бегларьянцу. 8—10

ԵՂԱՐԱՔ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՆԻՅ Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ

Գրասենեակը Կուղեցիկի կամրջի վրա, Կ. Ս. Պոպովի տանը:
Պատիւ ունինք յայտնելու հասարակաց դիտութեան, որ մեր ֆիրմայի **ԹԷՅԻ** առեւտուրի համար բաց արինք նորերումս նոր խանութներ և հետեւեալ քաղաքներում:
ԽԱՐԿՈՎՈՒՄ—Պետրոպոլի փողոցի վրա, սեփական տանը:
ԹԻՖԼԻՉՈՒՄ—Գօլօվինսկի պրօսպեկտի վրա, Միրիմանեանի տանը:
ՍԷՎԱՍՏՕՊՈԼԻՄ—Բօլշոյ-Մօրսկոյ փողոցի վրա, Կօզէն վաճառականի տանը:
Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ:
ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ և **ԿԻԵՎՈՒՄ**—Թէ՛յն որ առած է ֆուտերի, կէս ֆուտերի և քառորդ ֆուտերի, ուղարկվում է մեր գլխաւոր պահեստի խանութից՝ որ գտնվում է Մօսկվայում, Կրանսուէյսկի փողոցի վրա, սեփական տան: 13—30

ԶԱՔԱՐԻԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԽԱՅԱՌԱՆՈՅՈՒՄ» հրատարակութեամբ լոյս են տեսած հետեւեալ ԴԱՍԱԿԱՆ և ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐԱՆԻՔԸ:

1 Սիմօնեանց Մ. Ժողովածու թուականային խնդիրների մ. ա. (ամբողջ թուեր)	50 ր.
2 Նոյնը մասն ր. (կտորակներ)	50 »
3 Պատգիրք թուականութեան	65 »
4 Ղուկասեանց դասագիրք ընթերցանութեան	40 »
5 Ընդհանուր պատմութիւն հին դարը մ. ա.	80 »
6 Սիմօնեանց Պ. Սրբազան պատմութիւն հին կտակարանի հ. ա.	60 »
7 Նոր կտակարանի հ. ա.	60 »
8 Տէր Ագոստինոսի դասագիրք ուսուցիչ լեզուի	60 »
9 Ընթերցարան մասն առաջին	25 »
10 Պատաստար աղօթից	7 »
11 Զ. Գրիգորեանց մարդկագրութիւն	50 »
12 Սիմօնեանց Ն. Պատգիրք ընդհանուր աշխարհագրութեան հ. ա. մասն նախագիտելիք 5 պատկերով	35 »
13 Նոյնը հ. ր. մասն ուսումնական և բնական 31 պատկերով	60 »
14 Ն. Գ. մասն քաղաքական	60 »
15 Բանաթիւնց քերականութիւն աշխարհիկ լեզուի	25 »
16 Երզնկեանց մանկական երգարան	20 »
17 Չայնագրեալ մանկական երգարան	40 »
18 Գամառա Գառիպայ մանկական ոտանւորներ և երգեր	20 »
19 Միրիմանեան թուականութիւն (թուեր)	12 »
20 Կօնդատնիկի գծագրութեան օրինակներ	40 »
21 Քերական-Ալեքսանդրի հին ոճով	10 »
22 Տղայանցներ չորս երես թերթ	5 »
23 Շարժական տաւեր միմաստու և փոքրատաւ թերթ	5 »
24 Թերթի երկուք թ. դարս	1 ր.—
25 Թերթորոտ Ոչաւերի	1 ր.—
26 Թորոտ (խոն) (2-դ տպագրութիւն)	1 ր.—
27 Թագուրեան փ ո թ լեզուագիտական հետազոտութեան	50 ր.
28 Նազարեանց պօլիփոնիկալ—մանկական թատրոն	20 ր.
29 Աթիմեանց Նայա և Գամայեանտի	20 ր.
30 Ա. Ս. Ե. Պ. Գիւցաղուէք Հայկ. Արամ և Վահագն	30 ր.

31 Մանդինեանց Ազգային—ընտանեկան աշխարհ	25 ր.
32 — — — — — Գիւցաղուէք աշխարհ	30 ր.
33 — — — — — Նահապետական և հայրենի աշխարհ	65 ր.
34 Երզնկեանց դասագիրք Չայնագրութեան	30 ր.
35 Տէր-Արամեանց Հ. պատմութիւն 24 պատկերով	1 ր.
36 Տնային բժշկական մարմնամարզութիւն	40 ր.

Վերջինիւ գրքերը տասնից աւելի առնողներին 20% զիջումն կը լինի գինը կանխիկ վը- ճարողին: 4—20

Արդէն պատրաստի ունեմ 25 հատ ձայնագրած հայկական երգեր դաշնամուրի համար Այդ երգերը ի լոյս ընծայելու համար են ստորագրութիւն եմ բացել տպագրութեան ծախքը մասամբ թիֆլեացիներ համար: Այժմէն ստորա- գրվողները համար իւրաքանչիւր օրինակի գինը լինելու է 1 ր. 60 ր., իսկ տպագրվե- լուց յետոյ գինը կը լինի 2 ր.: Իւրաքանչիւր 5 օրինակ ստորագրվողը կը ստանայ 6 օրինակ:

Ահա տպագրվելու ձայնագրած երգերի անունները:
1. Այ մարդ այսոր... 2. Ախալիշ անձայն... 3. Արեք որ երթամք... 4. Ագ- նիւ ընկեր... 5. Արեք Հայկազունք... 6. Արիացիի գոնեա... 7. Բաժաններ առ- նունք... 8. Գիշերի ցերեկ... 9. Երբ որ բացուին դռներ... 10. Եղբարք մի շուրջ... 11. Զինուորին երգեր... 12. Էր հեռանաս... 13. Թէ ծխաքաղը ձեռքես... 14. Ինչ սիրուն ես... 15. Իմ սիրտս աղ ես... 16. Իմ սիրելի զաւակուէք... 17. Խնդա այսոր... 18. Կտուր կտուր... 19. Կապոյտ երկնքում... 20. Հայրենիք սրբազան... 21. Հայոց աղջիկներ... 22. Մեր հայրենիք... 23. Մեր կեանքի նման... 24. Մայր Արաքսի... և 25. Ողջոյն քեզ Հայաստան: Այս 25 երգերը կը հրատարակվին մի տետրակում, որ կը ցանկան օգնելու այդ երգերի շուտով տպագրվելուն, թող անյա- պաղ դիմեն ինձ ամենայն տեղից հետեւեալ հասցեով. Тифлисъ Ивану Артемевичу Сузанаджянъ. Галерея Арцруни въ музыкальную торговлю „Ли́ра Ита́ли“

Ինձ մօտ վաճառվում են 4 հատ հայկական երգեր մի տետրակում դաշնա- մուրի համար ձայնագրած երգեցողութեամբ այն է 1. Անի քաղաք. 2. Ինձ համար չէ. 3. Յորտը փչեց և 4. Ծիծեռնակ: Գինն է 1 ռուբլի, օտարաքաղաքացիք 10 կօ- պէկ փոստի ծախք են վճարում: Եւ «Յինաղի տաւիղ Յրէյզուն» երգարանը, որի մէջ 50 հատ նոր աղգասիրական երգեր են բովանդակվում, գինն 30 կոպէկ: Ցանկա- ցողք թող դիմեն ինձ փերդուէլ հասցեով:

Յովհաննէս Սուզանաճեանց
ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթ ունեւ և բազկաթ ունեւ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջե փողոցում Կատօլիկաց փողոցի անկիւնում ՄԻ- ԲԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову. 68—150